



Polish aid



Solidarity Fund PL



HELSINKI ASSOCIATION  
for human rights

## Չեկույց

**Երիտասարդները հանուն  
անկախ ու թափանցիկ  
դատական համակարգի.**

**Մշտադիտարկումը քրեական  
արդարադատության ոլորտում**

Երևան 2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամփոփ ակնարկ	1
Ներածություն	3
Չեկույցի մեթոդաբանությունը	5
Օգտագործվող տերմիններ	6
Արդարադատություն. աջակցող սկզբունքներ	7
Արդարադատության արտաքին և ներքին չափումներ	13
Մշտադիտարկումը քրեական արդարադատության ոլորտում Մշտադիտարկման առարկան .....21 Մշտադիտարկման մեխանիզմը և արդյունավետությունը .....21	20
Դիտորդական խումբը Դիտորդական խմբի կազմավորում և վարքագծի կանոններ .....23 Տվյալների հավաքման մեխանիզմներ .....24 Հաշվետվողականություն. միջանկյալ և ամփոփիչ հաշվետվություններ .....24	23
Յեռնություններ և առաջարկներ Օրենսդրական բացեր և անհրաժեշտ վերանայումներ .....26 Արդարադատությանը հակազդող դատավարական սովորույթներ և դրանց հաղթահարմանն ուղղված շոշափելի լուծումներ .....26	26

# Ամփոփ ակնարկ

Մշտադիտարկումն իրավապաշտպան գործունեության մաս է, առանց որի անհնար է իրավական ճանապարհով և ճնշումների բացառմամբ հասնել հասարակական կյանքի փոփոխությունների: Իրավապաշտպաններն իրականացնում են մշտադիտարկում մարդու իրավունքների ոտնահարման մասին տեղեկությունները հաստատելու կամ հերքելու համար, հավաքում են իրավախախտումների վերաբերյալ ապացույցներ, այլ տվյալներ, որոնց վերլուծությունը թույլ է տալիս պլանավորել իրավիճակը փոխելուն ուղղված հետագա անհրաժեշտ գործողությունները:

Դատական մշտադիտարկումն իրավապաշտպան գործունեության ձև է, որի եռությունը դատավարությունների և ընդհանրապես դատարանների աշխատանքի դիտարկումն է՝ արդար դատաքննության իրավունքի խախտումները հայտնաբերելու նպատակով:

Դատական մշտադիտարկումն ունի նեղ նպատակ՝ տեղեկություն հավաքել արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ: Դրա խնդիրը դռնբաց դատական նիստում կատարվածի անաչառ դիտարկումն ու արձանագրումն է:<sup>1</sup>

Դատական մշտադիտարկման պատմությունը ժամանակագրորեն հատվում է աշխարհաքաղաքական երկու բևեռներում: Մի կողմից առաջադեմ Արևմուտքը ստեղծել էր մարդու իրավունքների ջատագովության նոր մեխանիզմների ներդրմանը զարկ տալու բոլոր նախադրյալները, որոնց շնորհիվ «Ամենաթի Ինթերնեշնլ» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը 1962 թվականին առաջին անգամ դիտարկում իրականացրեց Նելսոն Մանդելայի գործով: Մյուս կողմից Խորհրդային Ռուսաստանը, ճնշելով ցանկացած «այլ»-ի գեներացում, չկարողացավ ճնշել այլախոհների շարժումը: Նրանց հաջողվեց 1965 թվականի դեկտեմբերի 5-ին՝ խորհրդային սահմանադրության օրը, անցկացնել Զրապարակայնության հանրահավաք, որի հիմնական կարգախոսը մինչ այդ ձերբակալված Անդրեյ Սինյավսկու և Յուլի Դանիելի առաջիկա դատավարության հրապարակայնության պահանջն էր, իսկ արդյունքը՝ դատավարությունների և դատարանների աշխատանքների մշտադիտարկման սկզբնավորումը՝ որպես իրավապաշտպան գործունեության անհրաժեշտ տարրի ձևավորում: Ժամանակի համար առաջադեմ այս օրինակները մեծապես հիմք ծառայեցին մշտադիտարկման ազգային և միջազգային փորձի ձևավորման և զարգացման գործընթացի համար:

Դատական մշտադիտարկման՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի կայացման գործում մեծ դեր է խաղացել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (այսուհետ՝ ԵԱԶԿ):

1990 թվականին ԵԱԶԿ Մարդկային չափման խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթով հիմք դրվեց մասնակից պետությունների կողմից ուղարկվող դիտորդների, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց՝ դատարաններում դիտարկումներ կատարելուն, ինչն ուղղված է դատական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդմանը և օգնում է գնահատելու, թե որքանով է արդար դատաքննության իրավունքը համապատասխանում տվյալ երկրի օրենսդրությանը և միջազգային լավագույն չափորոշիչներին:

<sup>1</sup> <https://kaluga-zaprava.ru/biblioteka/inostrancam/metodichki/sudebnyj-monitoring/> СУДЕБНЫЙ МОНИТОРИНГ, 19.09.2019, КАЛУЖСКОЕ РЕГИОНАЛЬНОЕ ОБЩЕСТВЕННОЕ ДВИЖЕНИЕ ЗА ПРАВА ЧЕЛОВЕКА

1990-ական թվականից դատական մշտադիտարկումը դարձել է ԵԱՀԿ գործունեության մաս և օգնում է մասնակից պետություններին իրականացնելու օրենսդրական բարեփոխումներ, այդ թվում՝ դատական համակարգի առնչությամբ: ԵԱՀԿ-ն հրապարակում է մշտադիտարկման թեմայով ուղեցույցներ, որոնք վերաբերում են ինչպես դատական գործընթացներին առհասարակ, այնպես էլ որոշակի տեսակի դատավարությունների: Դիտարկումն իրականացնում են ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) և տարբեր երկրներում ԵԱՀԿ առաքելությունները:<sup>2</sup> ԵԱՀԿ կողմից դատավարական մշտադիտարկումն իրականացվում է նոր օրենքների, մասնավորապես դատավարական օրենսգրքերի, ինչպես նաև նոր ստեղծված դատարանների աշխատանքները ստուգելու նպատակով:

---

<sup>2</sup>ԺՀՄԻԳ-ը և ԵԱՀԿ առաքելությունները դիտարկում կատարում են պետության կառավարության հրավերով:

# Ներածություն

ԵԱՀԿ մասնակից այլ պետություններից և դրանց հասարակական կազմակերպություններից դիտորդների մասնակցությունը դատական գործընթացներին վստահության ամրապնդման այն միջոցն է, որի գործարկման շուրջ համաձայնել են ԵԱՀԿ մասնակից պետությունները: Այս պարտավորությունը գործնականում կատարելու պահից ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և ԵԱՀԿ առաքելությունները դատավարությունների դիտարկման զգալի փորձ են կուտակել: Սա ցույց է տալիս, որ դատավարության դիտարկումն արդյունավետ գործիք է դատական բարեփոխումների, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի ազգային և միջազգային երաշխիքների խթանման համար: Դատավարության անկախ մշտադիտարկումը կարող է վեր հանել արդարադատության համակարգի ինչպես թույլ, այնպես էլ ուժեղ կողմերը: Այն նաև իրավակիրառ համակարգի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ մշակելու հնարավորություն է ընձեռում: Շատ մասնակից պետությունների կառավարություններ ողջունում և կյանքի են կոչում նման առաջարկությունները, որոնք նպաստում են արդարադատության իրականացման համակարգի կատարելագործմանը, մարդու իրավունքների ու օրենքի գերակայության սկզբունքի պահպանմանը: <sup>3</sup>

Հայաստանի Հանրապետությունում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը դատական մշտադիտարկում իրականացրել է 2008 թվականի մարտի 1-2-ին Երևանում բռնությամբ ուղեկցված բախումների առնչությամբ: Այդ իրադարձությունների կապակցությամբ հարուցված քրեական գործերով Հայաստանի իշխանությունների համաձայնությամբ 2008 թվականի ապրիլի 15-ից մինչև 2009 թվականի հուլիսի 31-ն իրականացվել են դիտարկումներ: Մշտադիտարկման արդյունքում կազմվել է վերջնական զեկույց, որում ամփոփվել են դատավարություններում թույլ տրված բացթողումները և արդարադատության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկները:<sup>4</sup>

Դատական մշտադիտարկման ինստիտուտի կայացման ու զարգացման նպատակով ԵԱՀԿ-ն պարբերաբար հրատարակում է դատական մշտադիտարկման անցկացման գործիքակազմ պարունակող ուղեցույցներ: Սրանք մեկտեղում են ԵԱՀԿ դատական մշտադիտարկման ծրագրերի՝ տարիների ընթացքում կուտակված գիտելիքներն ու դրական փորձի օրինակները և արդյունավետ ուղի հարթում մասնակից պետությունների և իրավապաշտպան կազմակերպությունների համար՝ հնարավորություն ընձեռելով զինվելու անհրաժեշտ գիտելիքներով, որոնք օգտակար կլինեն արդարադատության համակարգի առողջացմանն ուղղված միջոցառումների պատշաճ իրականացման տեսանկյունից:

«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) տարիներ շարունակ իրականացնում է դատական մշտադիտարկումներ և, որպես հավաստի ուղենիշ, առաջնորդվում է ԵԱՀԿ ուղեցույցներով՝ միևնույն ժամանակ դրանցով առաջարկվող գործիքները հարմարեցնելով ներպետական իրավակիրառ համակարգին:

<sup>3</sup> «Դատավարությունների մշտադիտարկում», ուղեցույց, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, 2012 թ., <https://www.osce.org/files/f/documents/4/0/102519.pdf>:

<sup>4</sup> Final Report Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009), Office for Democratic Institutions and Human Rights, Warsaw, 8 March 2010, <https://www.osce.org/files/f/documents/3/d/41695.pdf>.

Այս տեսանկյունից անհրաժեշտ է հիշատակել [«Աջակցություն դատաիրավական քարտեզի ոլորտներին»](#) ծրագրի շրջանակներում 2020 թվականին կազմված «Դատական մշտադիտարկում և լուսաբանում: Արդար դատաքննության արտաքին երաշխիքներ» ուղեցույցը: Այն ամփոփում է հավասարկաշռված մեխանիզմներ, որոնց կիրառումը հնարավոր է դարձնում բացահայտել դատական համակարգում գոյություն ունեցող խախտումներն ու բացթողումները:

Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության Լեհաստանի զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ և Լեհաստանի «Համերաշխություն» հիմնադրամի համագործակցությամբ 2021 թվականի հուլիսի 15-ից Կազմակերպությունը նախաձեռնել է *«Իրավական ոլորտում վերապատրաստված երիտասարդ քաղաքացիները՝ որպես անկախ և թափանցիկ դատական համակարգի երաշխավորներ»* ծրագիրը, որի նպատակն է խրախուսել երիտասարդների մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատության համակարգի թափանցիկության խթանման գործին: Ծրագրի ընթացքում հիշյալ ուղեցույցի գործիքակազմով Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում իրականացվել են դատական մշտադիտարկումներ, որոնց ընթացքում համակարգված եղանակով տեղեկություններ են հավաքվել դիտարկվող դատավարությունների՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափորոշիչներին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև հայտնաբերվել քրեական արդարադատության համակարգում հնարավոր բացթողումները: Իրականացված դիտարկումների արդյունքում բացահայտված խնդիրներն ու դրանց լուծումներն ամփոփվել են սույն զեկույցում և շարունակում են լինել արդիական:

## Չեկույցի մեթոդաբանությունը

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի բարելավումն է: Այդ նպատակի հստակեցման համար սահմանվել են ածանցյալ նպատակներ՝ ա) մշտադիտարկման գործնական մեխանիզմի մշակում որպես օգտակար, հարմարեցված և կիրառելի գործիք՝ դատական համակարգի թերությունները բացահայտելու համար (հաշվետվությունների ներկայացման հատուկ սխեմայի մշակում, բարելավումներ, տեղեկատվություն և հետադարձ կապ), բ) առաջարկությունների մշակում՝ ուղղված ՀՀ իշխանություններին:

Սույն զեկույցում ամփոփվում են բոլոր այս նպատակները:

## Օգտագործվող տերմիններ

<b>ԲԴԽ</b>	Բարձրագույն դատական խորհուրդ
<b>ԵԱՀԿ</b>	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
<b>ԺՅՄԻԳ</b>	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
<b>Կազմակերպություն</b>	«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՄԱԿ</b>	Միավորված ազգերի կազմակերպություն
<b>ՄԻԵԴ</b>	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
<b>ՄԻԵԿ</b>	«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիա
<b>ՔՔԻՄԴ</b>	«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր



## Արդարադատություն. աջակցող սկզբունքներ

ԺՅՄԻԳ-ը և ԵԱՀԿ դաշտային առաքելությունների մեծ մասը տարիներ շարունակ իրականացնում են դատավարությունների դիտարկման ծրագրեր: Դրանց նպատակն է աջակցել մասնակից պետություններին արդարադատության գործող համակարգերի զարգացման հարցում, մասնավորապես ապահովել դատական որոշումների՝ պատշաճ ընթացակարգով համապատասխանությունը օրենքի գերակայությանը:

2008 թ.-ին ԵԱՀԿ Նախարարների խորհուրդը կոչ արեց մասնակից պետություններին ապահովել «միջազգային իրավական պարտավորությունների կատարումը՝ որպես ԵԱՀԿ տարածաշրջանում օրենքի գերակայության ամրապնդման հիմնական տարր»<sup>7</sup> դրանով իսկ ԵԱՀԿ պարտավորությունների մեջ ներառելով նաև մասնակից պետությունների այն իրավական պարտավորությունները, որոնք բխում են այլ միջազգային փաստաթղթերից:

Կոպենհագենի խորհրդակցության մասնակից պետություններն արտահայտել են համոզմունք առ այն, որ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները լիովին հարգելը և բազմակարծիք ժողովրդավարության և օրենքի գերակայության վրա հիմնված հասարակությունների զարգացումը անհրաժեշտ պայման են կայուն խաղաղության, անվտանգության, արդարության ու համագործակցության կայուն իրադրություն ստեղծելու գործում:<sup>8</sup>

Օրենքի գերակայությունը կյանքի կոչելն անհնար է առանց պրոֆեսիոնալ իրավաբանների (այդ թվում՝ անկախ դատավորների և փաստաբանների), արդար և մատչելի ընթացակարգերի և թափանցիկության բարձր աստիճանի: Այս 3 գործոնների առկայությունը, ԺՅՄԻԳ-ի դիրքորոշմամբ, ունի կենսական նշանակություն, քանի որ երաշխավորում է, որ բոլոր անհատները կամայականությունների և իրենց իրավունքների խախտման դեպքում հնարավորություն կունենան փնտրելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ:<sup>9</sup>

Արդարադատության մատչելիության և հավասարության իրավունքները օրենքի գերակայության սկզբունքի հենքն են: Ըստ այդ իրավունքների՝ յուրաքանչյուր ոք պետք է ունենա դատարան դիմելու հավասար իրավունքներ, արդարադատությունն իրականացնելիս արդարությունը պետք է երաշխավորվի բոլորի համար՝ անկախ դատավարության կողմերի անհատականությունից կամ դատավարության բնույթից:

Մարդու իրավունքների կոմիտեն դատարանների առջև հավասարության իրավունքը, այդ թվում՝ արդարադատության հավասար հասանելիությունը, անվանել է մարդու իրավունքների պաշտպանության առանցքային տարր և օրենքի գերակայության ապահովման ընթացակարգային միջոց:<sup>10</sup>

---

<sup>7</sup> ԵԱՀԿ Նախարարների խորհրդի «Օրենքի գերակայության հետագա ամրապնդումը ԵԱՀԿ տարածքում» թիվ 7/08 որոշում (ԵԱՀԿ Նախարարների խորհրդի «Տասնվեցերորդ նախարարական խորհրդի հանդիպում» փաստաթղթի մասն է), Յելսինսկի, 2008 թ., դեկտեմբերի 4-5:

<sup>8</sup> ԵԱՀԿ Մարդկային չափման խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթ, 1990 թ.:

<sup>9</sup> ОБСЕ/БДИПЧ и вопросы верховенства права, <https://www.osce.org/files/f/documents/2/4/147591.pdf>.

<sup>10</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, ԶԶԻՄԴ ընդհանուր մեկնաբանություն թիվ 32 (2007 թ.):

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածը խոսում է յուրաքանչյուրի արդար և դռնբաց դատաքննության իրավունքի մասին: Դատարանների առջև հավասարության այս իրավունքը ամրագրված է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետ՝ ԶԲԻՄԴ) 14-րդ հոդվածում, մինչդեռ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածը վերաբերում է միայն խտրականության ընդհանուր արգելքին, իսկ թիվ 12 արձանագրության նախաբանը հղում է անում օրենքի առջև հավասարության հիմնական սկզբունքին: Ինչ վերաբերում է դատարան դիմելու իրավունքին, ապա ինչպես ԶԲԻՄԴ-ը, այնպես էլ ՄԻԵԿ-ը այս իրավունքը դիտարկում են արդար և հրապարակային դատաքննության իրավունքի շրջանակներում: Մարդու իրավունքների տարածաշրջանային այլ պայմանագրերից միայն Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան է ուղղակիորեն ամրագրում «յուրաքանչյուրի՝ իր գործը դատարանում լսված լինելու» իրավունքը: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) նույնպես հայտնել է դիրքորոշում առ այն, որ դատարան դիմելու իրավունքը ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի անբաժանելի տարրն է՝ «հաշվի առնելով այն հատուկ տեղը, որը ժողովրդավարական հասարակությունում զբաղեցնում է արդար դատաքննության իրավունքը»:<sup>11</sup>

Դատարան դիմելու և դատարանում իրավահավասարության իրավունքները տարածվում են հավասարապես քրեական և ոչ քրեական գործերի վրա: Սրանք պետք է հարգվեն նաև բոլոր այն դեպքերում, երբ ազգային օրենսդրությունը դատական գործառույթ է վերապահում դատական մարմին, ինչպես, օրինակ, քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթի պարագայում:<sup>12</sup>

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի լույսի ներքո՝ դատարանի վճիռների կատարումը դատավարության անբաժանելի մասն է, հետևաբար ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական դատավարություններում վճիռների կատարումը դատարան դիմելու իրավունքի հիմնարար կողմերից է: Օրինակ՝ *Բուրդոյն ընդդեմ Ռուսաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է, որ պետությունը չի կարողվկայակոչել միջոցների սղությունը՝ որպես պարտքի չվճարման պատրվակ (դատարանը որոշում էր կայացրել պարտքը վճարելու մասին):

Դատարան դիմելու իրավունքը երաշխավորում է, որ ոչ ոք չի կարող զրկված լինել արդարադատություն պահանջելու իր իրավունքից:<sup>13</sup>

---

<sup>11</sup> *Golder v the United Kingdom* [1975] ECHR 1, paras 35–36/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57496%22>}; *Ait-Mouhoub v France* [1998] ECHR 97, para 52/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-58259%22>}; *Z and Others v the United Kingdom* [2001] ECHR 333, para 91/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-59455%22>}; *Steel and Morris v the United Kingdom* [2005] ECHR 103, para 59/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-68224%22>}. Եվ նաև՝ *Philis v Greece* [1991] ECHR 38, para 65/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57681%22>}.

<sup>12</sup> ՄԱԿ -ի Մարդու իրավունքների կոմիտե, ԶԲԻՄԴ ընդհանուր մեկնաբանություն թիվ 32 (2007); *Perterer v Austria*, HRC Communication 1015/2001, UN Doc CCPR/C/81/D/1015/2001 (2004), para 9.2.

<sup>13</sup> ՄԱԿ -ի Մարդու իրավունքների կոմիտե, ԶԲԻՄԴ ընդհանուր մեկնաբանություն թիվ 32 (2007); *Golder v the United Kingdom* [1975] ECHR 1, paras 34–36:

Այնուամենայնիվ, այս իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել իրավական սահմանափակումների, ինչպիսին է, օրինակ, վաղեմության ժամկետը:<sup>14</sup>

Ժողովրդավարական հասարակությունում դատարանների նկատմամբ հանրության վստահությունն ունի սկզբունքային նշանակություն: Այս առումով ինչպես ԶԲԻՄԴ-ը, այնպես էլ ՄԻԵԿ-ը պահանջում են, որ դատարանները Դաշնագրի 14-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածների ուժով պահպանեն անաչառություն: Դատարանի անաչառությունն ունի երկու կողմ: Առաջինը սուբյեկտիվն է, երբ դատավորը թույլ չի տալիս, որ իր որոշումների վրա ազդի անձնական կողմնակալությունը կամ նախապաշարմունքը, ինչպես նաև բացառում է քննվող գործի նկատմամբ կանխակալ վերաբերմունքը: Կիրառելով սուբյեկտիվ չափանիշը՝ ՄԻԵԿ-ը հետևողականորեն հաստատում է, որ դատարանի վրա պետք է տարածվի դատավորների անձնական անաչառության կանխավարկածը, քանի որ հակառակի վերաբերյալ հաստատված ապացույցներ չկան:<sup>15</sup> Սա արտացոլում է օրենքի գերակայության սկզբունքի կարևոր բաղադրիչը դատարանի վճիռների վերջնական և պարտադիր կատարման ենթակա լինելու տեսանկյունից:<sup>16</sup> Երկրորդը օբյեկտիվ անաչառությունն է, ըստ որի՝ դատարանը պետք է անաչառության տպավորություն թողնի ողջամիտ դիտորդի վրա: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում այս միտքն արտահայտվում է հետևյալ կերպ. «Անհրաժեշտ է որոշել, թե, դատավորի վարքագծից բացի, կա՞ն արդյոք ստուգելի փաստեր, որոնք կարող են կասկածներ հարուցել նրա անաչառության վերաբերյալ»:<sup>17</sup> Տպավորությունները նույնպես կարևոր են: Այդ մասին է փաստում Եվրոպական դատարանի վճիռը. «Անհրաժեշտ է, որ արդարադատությունը ոչ միայն իրականացվի, այլև տեսանելի լինի, որ այն իրականացվում է»:<sup>18</sup>

---

<sup>14</sup> Z and Others v the United Kingdom [2001] ECHR 333, para 93// <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-59455%22>]; տե՛ս նաև Nuala Mole and Catharina Harby, The right to a fair trial (Արդար դատաքննության իրավունքը) (Council of Europe Human Rights Handbook No 3, 2006), p.36; Tolstoy Miloslavsky v the United Kingdom [1995] ECHR 25, para 61/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57947%22>]; Al-Adsani v the United Kingdom [2001] ECHR 761, para 56/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-59885%22>]; McElhinney v Ireland [2001] ECHR 763, para 35/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-59887%22>]; Cordova v Italy [2003] ECHR 47, para 60/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-60914%22>]; Beer and Regan v Germany [1999] ECHR 6, para 53/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-58299%22>].

<sup>15</sup> Le Compte, Van Leuven and De Meyere v Belgium [1981] ECHR 3, para 58/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57521%22>]; Campbell and Fell v the United Kingdom [1984] ECHR 8, para 84/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57456%22>]; Hauschildt v Denmark [1989] ECHR 7, para 47/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57500%22>]; Padovani v Italy [1993] ECHR 12, para 26/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57812%22>]; Kyprianou v Cyprus [2005] ECHR 873, para 119/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-71671%22>].

<sup>16</sup> Kyprianou v Cyprus [2005] ECHR 873, para 119/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-71671%22>].

<sup>17</sup> Ferrantelli and Santangelo v Italy [1996] ECHR 29, para 58/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57997%22>]; Hauschildt v Denmark [1989] ECHR 7, para 48/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57500%22>]; Wettstein v Switzerland [2000] ECHR 695, para 44/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-59102%22>]; Dakaras v Lithuania [2000] ECHR 460, para 32/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-58855%22>]; Kyprianou v Cyprus [2005] ECHR 873, para 118/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-71671%22>].

<sup>18</sup> Delcourt v Belgium [1970] ECHR 1, para 31/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57467%22>]; De Cubber v Belgium [1984] ECHR 14, para 26/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57464%22>]; Mežnarić v Croatia [2005] ECHR 497, para 32/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-69726%22>].

Թեև հրապարակային դատաքննության իրավունքը հիմնված է արդարադատության բաց և թափանցիկ իրականացման հայեցակարգի վրա, այնուամենայնիվ, ինչպես պարզաբանվում է ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի «Սիրակուզյան սկզբունքներ»-ում, արդար և հրապարակային դատաքննության իրավունքը կարող է ենթարկվել իրավական սահմանափակումների, եթե դա անհրաժեշտ է ԶԲԻՄԴ 4-րդ հոդվածի կամ ՄԻԵԿ 15-րդ հոդվածի համաձայն հայտարարված արտակարգ դրության պայմաններում՝ հաշվի առնելով ազգի կյանքին սպառնացող վտանգը:

Արդարադատության մատչելիության և դրան իրական մասնակցություն ունենալու իրավունքը հաճախ կախված է հենց իրավական օգնության հասանելիությունից: ՄԻԵԿ-ն այս առիթով հայտնել է դիրքորոշում առ այն, որ արդարադատության արդյունավետ հասանելիությունը հնարավոր է ապահովել այլ միջոցներով, օրինակ՝ ընթացակարգերի պարզեցմամբ: <sup>19</sup>

ԵԱԶԿ մասնակից պետությունները պարտավորություններ են ստանձնել՝ պահպանելու արդարադատության իրականացման մի շարք նորմեր և սկզբունքներ: Դրանցից ամենակարևորը անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդար և հրապարակային լսումների իրավունքը ապահովելու պարտավորությունն է: <sup>20</sup>

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Մարդու իրավունքների կոմիտեն առանձնացրել է դատարանների անկախության որոշման չորս հիմնական հատկանիշ՝ ա) դատավորների նշանակման կարգը, բ) դատավորների անփոփոխելիության երաշխիքը, այսինքն՝ նրանց պաշտոնավարման տևողությունը և այն ընդհանուր սկզբունքը, որ նրանք ենթակա չեն հեռացման, գ) դատարանին և դատավորներին արտաքին ազդեցություններից պաշտպանելու համար բավարար երաշխիքների առկայությունը, դ) դատարանի անկախության արտաքին նշանները: Իրենց պաշտոնավարման ընթացքում դատավորները պետք է դրսևորեն լիակատար անկախություն՝ որոշումներ կայացնելիս չվախենալով և չկաշկանդվելով իշխանության կողմից նշանակված լինելու հանգամանքից, այդպիսով չդառնալով վերջինիս կամքն իրականացնող գործիք և որոշումները չկայացնել բացահայտ կամ անուղղակի ճնշումների ներքո՝ պաշտոնից հեռացվելու կամ այլ վտանգներից ելնելով: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նշել է, որ պաշտոնավարման ընթացքում դատավորներին հեռացնելու անհնարիտությունը նրանց անկախության բաղադրիչն է: <sup>21</sup>

<sup>19</sup> Airey v Ireland [1979] ECHR 3, para 26/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57420%22>}.

<sup>20</sup> Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթ, Վիեննա, 1989, պարբ. 13.9:

<sup>21</sup> Campbell and Fell v the United Kingdom [1984] ECHR 8, para 80/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57456%22>}.

Միևնույն ժամանակ Սիրակուզյան սկզբունքները հստակեցնում են, որ արդար դատաքննության որոշ իրավունքներ չեն կարող չեղյալ համարվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում, քանի որ «օրինականության և օրենքի գերակայության սկզբունքներից բխում է, որ արդար դատաքննության հիմնարար պահանջները պետք է բավարարվեն նաև արտակարգ դրության ժամանակ»: Սա ներառում է անմեղության կանխավարկածը, ինչպես նաև սեփական անձի դեմ ցուցմունք տալուն կամ իրեն մեղավոր ճանաչելուն հարկադրված չլինելու իրավունքը:

Մարդու իրավունքների կոմիտեն այս առումով կասկածի տեղ չի թողնում. «Արդար դատաքննության հիմնարար սկզբունքներից շեղվելն արգելվում է բոլոր ժամանակներում: Մասնակից պետությունները ոչ մի պարագայում չեն կարող վկայակոչել Դաշնագրի 4-րդ հոդվածը՝ իրենց գործողությունները հումանիտար իրավունքի կամ միջազգային իրավունքի պարտադիր նորմերի խախտմամբ արդարացնելու համար, ինչպես, օրինակ, արդար դատաքննության հիմնարար սկզբունքներից, ներառյալ անմեղության կանխավարկածից շեղվելն է: Կոմիտեի կարծիքով՝ օրինականության և օրենքի գերակայության սկզբունքներից բխում է, որ արդար դատաքննության հիմնարար պահանջները պետք է բավարարվեն նաև արտակարգ դրության ժամանակ»:

ԵԱԶԿ մասնակից պետություններն արդար դատաքննության իրավունքը դիտարկել են որպես արդարության տարր, որը, ի թիվս մյուսների, խիստ անհրաժեշտ է մարդու բնածին արժանապատվության, ինչպես նաև բոլոր մարդկանց հավասար և անկապտելի իրավունքների լիարժեք իրականացման համար:<sup>22</sup>

Դատաքննության արդար լինելու գնահատումն ի վերջո կախված է գործի բոլոր հանգամանքներից, քննվող հանցագործության ծանրությունից և հետևանքներից, ինչպես նաև նրանից, թե արդյոք խախտումը փաստացի վնաս է պատճառել վարույթի այս կամ այն կողմին: Միաժամանակ հիմնական ուշադրությունը սևեռված է իրավունքների գործուն և արդյունավետ իրացման ապահովման վրա: Այս պայմանը ներկայացնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հիմնական և առավել հաճախ կիրառելի չափանիշներից մեկը՝ պետության՝ ՄԻԵԿ դրույթներին համապատասխանության գնահատումը:

Իրավահավասարության սկզբունքը նշանակում է, որ դատաքննության ընթացքում և դատավճռի կայացման փուլում կողմերի համար պետք է գործեն նույն ընթացակարգային պայմանները: Այն պահանջում է, որ *արդար հավասարակշռություն* հաստատվի կողմերի միջև, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկներն այնպիսի պայմաններում, որոնք նրան անբարենպաստ վիճակում չեն դնում հակառակ կողմի համեմատ:<sup>23</sup> Այս սկզբունքն արդար դատաքննության իրավունքի բաղադրիչներից մեկն է և սերտորեն կապված է դատարանների առջև հավասարության սկզբունքի հետ:

<sup>22</sup> ԵԱԶԿ Մարդկային չափման խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթ, 1990 թ.:

<sup>23</sup> Werner v Austria [1997] ECHR 92, para 63/<https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-58114%22>]; Coëme and Others v Belgium [2000] ECHR 250, para 102/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-59194%22>]; G. B. v France [2001] ECHR 564, para 58/ <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-109219%22>].

## Արդարադատության արտաքին և ներքին չափումներ

Իրավական պետության ամբողջ գործունեությունը ենթակա է օրենքի նորմերին, ինչպես նաև հիմնարար իրավական սկզբունքներին, որոնք ուղղված են մարդու արժանապատվության, ազատության և իրավունքների պաշտպանությանը: Բնական իրավունքի տեսությունում ամփոփված այս դրույթը բնորոշում է *իրավունքի գերակայություն* եզրույթը:

Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրման գործընթացները ստեղծեցին հրամայական՝ խորությամբ յուրացնելու այն հիմնարար արժեքները, որոնք անկյունաքարային էին դարձել միջպետական իրավահարաբերությունների համար հատկապես մարդու իրավունքների բնագավառում:

Անհրաժեշտ էր ստեղծել միջավայր մարդու և քաղաքացու սոցիալական արժևորման, նրա ինքնադրսևորման և ինքնահրացման համար: Այս միջավայրում գերակայելու էր իրավունքը, իսկ իշխանության քաղաքական ու հանրային-իրավական վարքագիծը ներդաշնակեցվելու էր իրավունքի գերակայության սկզբունքին:

Իրավունքի գերակայությունը, լինելով իրավական պետության հիմնասյունը, ենթադրում է այնպիսի գործոնների միաժամանակյա առկայություն, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանվածությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունը, իրավական ակտերի որոշակիությունը, կամայականության արգելքի երաշխիքը, մարդու իրավունքների երաշխավորման պետության դրական պարտավորությունը և հիմնական իրավունքներին միջամտության համաչափությունը, իրավական վեճերի արդյունավետ և իրավական ճանապարհով լուծման անհրաժեշտությունը: Բոլոր թվարկված գործոնները հասունացնում են մարդու իրավունքների գերակայության սկզբունքից բխող անկախ և անաչառ արդարադատության գործոնը՝ պայմանավորվելով դրա կիրարկմամբ:

Հայաստանի Հանրապետությունը 1995 թվականի Սահմանադրության ընդունմամբ նախաձեռնել և 2005 թվականին կատարված բարեփոխմամբ շարունակել է արդարադատության արդյունավետ համակարգի և անկախ դատական իշխանության ձևավորմանն ու զարգացմանն ուղղված քայլերի իրականացումը:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական համակարգում դատական իշխանությունը գլխավորապես ունի հավասարակշռող կամ կայունացնող դեր: Նման առաքելության իրացման առաջնային նախադրյալը ոչ իրավաչափ ցանկացած ներգործությունից կամ միջամտությունից դատական իշխանության պաշտպանվածությունն է՝ դրա անկախության տեսքով:

Դատական իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ է, որը պատկանում է բացառապես հատուկ իրավասության պետական մարմիններին՝ դատարաններին, կոչված է հատուկ դատավարական կարգով լուծելու իրավական բնույթ ունեցող սոցիալական կոնֆլիկտները, այսինքն՝ իրականացնելու արդարադատություն:<sup>24</sup>

<sup>24</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի/, Երևան, 2010:

Ակնհայտ է, որ դատական իշխանությունը բացառիկ կարևորություն ունի ինչպես մարդու իրավունքների երաշխավորման ու պաշտպանության, այնպես էլ ընդհանուր առմամբ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, հասարակության իրավական և քաղաքական մշակույթի զարգացման և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական համակարգի կայացման տեսանկյունից: Դա պատահական չէ, քանի որ վերջինիս եռլայն առանցքում պետության հատուկ գործառույթի՝ արդարադատության իրականացումն է: Միայն գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր լինել:<sup>25</sup>

Եվրոպայի խորհրդի նպատակներից մեկը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կիրառման ապահովումն է ներպետական մակարդակում: Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների երաշխավորման լավագույն ուղին դրանք եվրոպական պետությունների ներպետական հաստատությունների կողմից իրականացման ապահովումն ու ազգային մտածելակերպում և վարվելակերպում ամրագրված ստերեոտիպերի ստործումն է: Արդարադատության համակարգն առաջնային դեր է խաղում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածը պետության պատասխանատվությունը կապում է արդյունավետ արդարադատություն իրականացնելու հետ:

Հայաստանի Հանրապետության՝ 1995 թվականին ընդունված Սահմանադրության մեջ բացակայում էր հստակ վերաբերմունքը մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրորեն ճանաչման ու ամրագրման նկատմամբ: Մարդու արժանապատվությունն ամրագրված էր ոչ թե որպես սահմանադրական իրավունքի, այլ որպես քրեաիրավական հարաբերությունների շրջանակներում պաշտպանության առարկա, և հաղթահարված չէր նախկին խորհրդային իրավական համակարգին բնորոշ մոտեցումն այս հարցում: Ուստի սահմանադրական բարեփոխումների կարևոր ուղղություն դիտվեցին մարդու հիմնական իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումը, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ ելնելով միջազգային իրավունքի, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներից:

---

<sup>25</sup>ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով /Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ/. «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» (գիտագործնական հետազոտություն) /Գ.Բ. Դանիելյան, Վ. Ա. Այվազյան, Ա. Ա. Մանասյան/, Երևան, 2015



Իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրն ուղղված էր Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական համակարգի և դատական իշխանության ապահովմանը, որի հնարավորությունը տեսանելի էր դառնում արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության կառուցմամբ:<sup>26</sup>

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրով ձևավորվեց սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, որի գործունեությունը պայմանավորված էր իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

Սահմանադրական բարեփոխումների հիմքում դրվեցին այն հիմնարար սկզբունքները, որոնց համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները, պետության կողմից ճանաչվելով որպես բարձրագույն արժեք, պետք է պայմանավորեն իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը և երաշխավորեն իշխանության սահմանափակումն իրավունքով: Սահմանադրական մակարդակում պետք է ամրագրվեն ու երաշխավորվեն դատական իշխանության գործառնության, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության անհրաժեշտ և բավարար նախադրյալներ:

2015 թվականին կայացած սահմանադրական հանրաքվեն պետք է լիներ այն անկյունաքարը, որի վրա հենվելու էր դատաիրավական բարեփոխումների հնգամյա ծրագիրը, որը նախաձեռնվել էր մինչ այդ:

ՀՀ Կառավարությունը 2017-2022 թվականների ծրագրով վերահաստատեց, որ երկրում արդարության կարևոր երաշխավորներից մեկը դատական համակարգն է, և անհրաժեշտ են համալիր միջոցառումներ՝ ուղղված դրա անկախության և անաչառության երաշխավորմանը՝ արդյունավետ և Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում սահմանադրական բարեփոխումները համակարգային լուծումների առումով թեպետ վերոնշյալ հարցերում որոշ առաջընթաց գրանցեցին, սակայն միևնույն ժամանակ բովանդակում էին նաև մի շարք կիսալուծումներ: Ինչպես հետագայում պարզ դարձավ, անհրաժեշտություն կար հաղթահարելու սրանք և հստակեցնելու համակարգային մոտեցումները:

---

<sup>26</sup> ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թթ.-ի ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ Նախագահի 30.06.2012 թ.-ի կարգադրությունը:



Բարեփոխումները, սակայն, անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չստեղծեցին իրավունքի գերակայության սկզբունքի առավել հետևողական իրացման և այս հարցում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարումը երաշխավորելու տեսանկյունից: Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», հիմնականում մնաց որպես բարի ցանկություն, քանի որ դրա իրացման համար անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ համակարգային առումով/մոտեցմամբ չամրագրվեցին:<sup>27</sup>

2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հետընտրական իրադարձություններին առնչվող և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից 2008 թվականի ապրիլից մինչև 2009 թվականի հուլիսն ընկած ժամանակաշրջանում դիտարկված դատավարությունների վերաբերյալ վերջնական գեկույցը, ինչպես նաև դատական անկախության մասին մի շարք միջազգային կազմակերպությունների փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ տվեցին բացահայտել Հայաստանի Հանրապետության դատական իշխանության և քրեական արդարադատության ոլորտի առանցքային խնդիրներ, որոնք, ժողովրդավարական և իրավական պետությունների լավագույն ավանդույթներին համապատասխան, պահանջում էին համակարգային, արագ և արդյունավետ լուծումներ:

Փաստն այն էր, որ կար արդարադատության համակարգի նկատմամբ վստահության պակաս: Ավելին, դատական իշխանությունը չէր ընկալվում որպես իշխանության անկախ ճյուղ, որը հակակշռում է դրա մյուս ճյուղերին:

Առաջացած մարտահրավերները մղեցին ՀՀ Կառավարությանը՝ կազմելու 2012-2017 թվականների ծրագիրը, որի խնդիրն էր պետական ինստիտուտների հնարավորությունները ուղղել մարդուն, հասարակության յուրաքանչյուր անդամին:

Այսպիսով, արդարադատության ոլորտում Կառավարության ծրագրերի կիզակետը դարձան հասարակության յուրաքանչյուր անդամի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, արդարադատության մատչելիության և յուրաքանչյուր վեճի արդարացի լուծման երաշխավորումը: Այս նպատակների իրագործման համար անհրաժեշտ է, որ դատական իշխանությունը լինի արդյունավետ և հանրությանը հաշվետու: Այդ նպատակով ընդունվելու էր դատաիրավական բարեփոխման նոր հայեցակարգ:<sup>28</sup>

---

<sup>27</sup> Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014 թ.:

<sup>28</sup> ՀՀ Կառավարության 2012 թ.-ի հունիսի 18-ի թիվ 730-Ա որոշում:

Արդարադատության ոլորտում ՀՀ Կառավարության բարեփոխումները պետք է ուղղվեն ՀՀ Սահմանադրության փոփոխություններից բխող օրենսդրության արդիականացմանը, մարդու իրավունքների և ազատությունների առավել արդյունավետ պաշտպանությանը, դատական համակարգի մատչելիության և արդյունավետության ապահովմանը, նորարարական լուծումների միջոցով արդարադատության համակարգի նպատակների իրացմանը, ինչից առաջանում էր անհրաժեշտություն՝ կատարելագործելու դատարանների և դատավորների ներքին անկախության ապահովման մեխանիզմները:<sup>29</sup> Կառավարության ստանձնած փաստաթղթային պարտավորությունները՝ ուղղված դատաիրավական բարեփոխումներին, արտապատկերում էին ՄԱԿ-ի կողմից դեռևս 1985 թվականին ընդունված Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքների Էությունը<sup>30</sup> և արդիական էին դարձնում դրանց առնչվող մարտահրավերներն ամենապարզ մակարդակներում: ԱՄՆ Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոն «Մարդու իրավունքների զեկույց-2017»-ում արձանագրել է, որ, չնայած օրենքի կարգավորմանը, դատական համակարգը ընդհանուր առմամբ անկախություն և անկողմնակալություն չի ցուցաբերել, դատավորները ենթարկվել են քաղաքական ճնշումների գործադիր բոլոր օղակների, իրավապահ կառուցների կողմից, ինչպես նաև դատական աստիճանակարգի շրջանակում:<sup>31</sup>

Դատական համակարգի փոփոխություններից ակնկալիքները փոխվեցին 2018 թվականին՝ երկրում տեղի ունեցած հեղափոխությամբ պայմանավորված:: Հետհեղափոխական պետությունում ճակատորկված նոր կառավարությունը Հայաստանում դատական համակարգի անկախության հիմնական խոչընդոտը համարում էր իշխանության օղակներից դատարաններից իջեցված ապօրինի հրահանգները, որոնք դատավորներին հնարավորություն էին տվել պատասխանատվություն չկրելու դատական վճիռների համար, որովհետև դրանք, ըստ Էության, կայացվել էին իշխանության ամենավերին օղակներում՝ փաստացի միայն ստորագրվելով իսկ դատավորների կողմից: Կառավարությունը բացառում էր իշխանական կամ որևէ այլ օղակներից դատավորների գործունեությանն ապօրինի միջամտելու գործելակերպը և համոզված էր, որ այս, ինչպես նաև դատարանների անկախությանը նպաստող այլ պայմանների ապահովումը բնականորեն կհանգեցնեն դատական անկախ համակարգի գոյությանը և իշխանության ճյուղերի իրական տարանջատմանը:<sup>32</sup>

«Freedom House»-ի «Ազատությունն աշխարհում 2019» և «Ազատությունն աշխարհում 2020» զեկույցներն անփոփոխ են հետհեղափոխական Հայաստանում դատարանների համակարգային քաղաքական ազդեցության ենթարկվելու, դատական համակարգի՝ կոռուպցիայի պատճառով խարխիլվելու, մեղադրյալներին դատապարտելու համար դատավոր-դատախազ համատեղ աշխատանքի և արդարացման դատավճիռների տոկոսի չափազանց ցածր լինելու տեսանկյունից:

<sup>29</sup> ՀՀ Կառավարության 2017 թ.-ի հունիսի 19-ի թիվ 646-Ա որոշում:

<sup>30</sup> ՄԱԿ-ի Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներ, 1985 թ., <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/independencejudiciary.aspx>:

<sup>31</sup> Մարդու իրավունքների զեկույց, 2017 թ., [https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017\\_arm.pdf](https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017_arm.pdf):

<sup>32</sup> ՀՀ Կառավարության 2018 թվականի թիվ 581-Ա որոշում:

Սակայն, ի տարբերություն նախորդող զեկույցի, «Ազատությունն աշխարհում 2020»-ն արձանագրում է դատավորների նկատմամբ հետաքննումների և կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասության շնորհման, անցյալին պատկանելու հիմքով Սահմանադրական դատարանի այդ ժամանակ գործող նախագահին իրավասություններից զրկելու գործընթացները:<sup>33, 34</sup>

2019 թվականին Կառավարությունը մշակեց դատաիրավական բարեփոխումների հնգամյա ծրագիրը, որով հռչակեց արդարադատության անցումային գործընթացը կամ, այլ կերպասած, անցումային արդարադատությունը, որն իրագործվելու էր մարդու իրավունքների զանգվածային, պարբերաբար խախտումների վերաբերյալ փաստերի հավաքման, խախտված իրավունքների վերականգնման հնարավորության դիտարկման, հանցագործությունների վերաբերյալ նոր տեղեկությունների ի հայտ գալու դեպքում այդ տեղեկություններն իրավապահ մարմիններին տրամադրելու և ինստիտուցիոնալ բարեփոխումների ներդրման և ստացված տեղեկությունները զեկույցի մեջ ամփոփելու շրջանակներում: Որպես դատական իշխանության անկախության և ինքնուրույնության երաշխիք՝ նախատեսվում էին Բարձրագույն դատական խորհրդի և Դատավորների ընդհանուր ժողովի գործունեության թափանցիկության ապահովումը գործնականում, դատական իշխանության ֆինանսավորման, դատավորների նշանակման և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգավորումների կատարելագործումը, դատավորների և նրանց աշխատակազմի համաչափ վարձատրությունը, դատավորների նկատմամբ հանրային վստահության բարձրացումը:<sup>35</sup>

Անհրաժեշտ է արձանագրել, որ, ըստ ընթացիկ հաշվետվությունների<sup>36,37</sup>, դատաիրավական բարեփոխումների ծրագրում ընդգրկված գործողությունների զգալի մասը չի կատարվել:

**Freedom House**  
**«Ազատությունն աշխարհում 2021» զեկույց**

Դատարանները բախվում են համակարգային քաղաքական ազդեցության, իսկ դատական ինստիտուտները խարխիված են կոռուպցիայի պատճառով:<sup>38</sup>

<sup>33</sup> <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2019>

<sup>34</sup> <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2020>

<sup>35</sup> ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարություն, 2019 թ., <https://www.moj.am/storage/uploads/Razmavarutyun19-23.pdf>:

<sup>36</sup> <https://www.moj.am/legal/view/article/1347/>

<sup>37</sup> <https://www.moj.am/legal/view/article/1376/>

<sup>38</sup> Freedom House, «Ազատությունն աշխարհում 2021» զեկույց, <https://freedomhouse.org/country/>

**Ամենաթի հիթերնեշև**

**«Մարդու իրավունքները ժամանակակից աշխարհում» (2020-21).  
գեկույց**

Խոստացված դատաիրավական և հակակոռուպցիոն բարեփոխումները կանգ են առել, այդ թվում՝ դրանց հատվածային բնույթի և ինստիտուցիոնալ փոխփոխություններ կատարելու անզորության պատճառով:<sup>39</sup>

Պետք է նկատել, որ միջազգային գնահատականների տեսանկյունից իրականացված և իրականացվող բարեփոխումների արժանահավատությունը որոշակիորեն կասկածի տակ է դրվում:

Նոր՝ 2021-2026 թվականների ծրագրով Կառավարությունը դատաիրավական բարեփոխումների օրակարգում առաջնային հռչակեց դատավորների բարեվարքության ամրապնդումը, ինչը պայմանավորելու է դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման, անկախ, անաչառ և հանրության առջև հաշվետու դատական համակարգի կայացման վերջնարդյունքը:

Արդարադատության արդյունավետության բարձրացման նպատակով Կառավարությունը նախաձեռնել է նաև ոլորտում խորը ազդեցություն թողնող այլ միջոցառումներ, օրինակ՝ դատավարական օրենսդրության արդիականացումը, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացումը, դատարաններում գործերի քննության ժամկետների կրճատումը և այլն: Կառավարության համոզմամբ՝ բարեփոխումներից հետո հանրության շրջանում դատական իշխանության դերի, բարձր առաքելության ընկալման մեծացումն իր հերթին ազդեցություն է ունենալու հանրային կյանքի բոլոր ոլորտների վրա:<sup>40</sup>

<sup>39</sup> «Ամենաթի հիթերնեշև» 2020/21 «Մարդու իրավունքները ժամանակակից աշխարհում» գեկույց, <http://eurasia.amnesty.org/wp-content/uploads/2021/04/doklad-amnesty-international-2020-2021-prava-cheloveka-v-sovremenno-mire.pdf>

<sup>40</sup> ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, 2021 թ., <https://www.gov.am/files/docs/4586.pdf>:

## Մշտադիտարկումը քրեական արդարադատության ոլորտում

Դատավարությունների մշտադիտարկումը կարող է լուծել խնդիրների լայն շրջանակ. այնուամենայնիվ, այն ունի նաև սահմանափակումներ: Միշտ չէ, որ սա արդարադատության բարեփոխումներին օժանդակելու բարենպաստ ծրագիր է: Այս առումով գնահատման կարևորագույն խնդիրներից է բարեփոխումների իրականացնելու հարցում իշխանությունների քաղաքական կամքի կամ շահագրգռվածության մակարդակը: Եթե պետությունը չունի բարեփոխումներ կատարելու քաղաքական կամք, ապա դատավարությունների մշտադիտարկումը թեև կարող է բացահայտել թերություններ, սակայն չի կարող առաջընթաց գրանցել արդարադատության անհապաղ կամ համակարգային բարեփոխումների խթանման գործում: Բացի դրանից՝ այն իրավիճակում, երբ պետությունն ինքն ակտիվորեն ներգրավված է արդար դատաքննության չափորոշիչների խախտումների մեջ, քաղհասարակությունը պետք է մտածի՝ պատրաստ է արդյոք ներկայացնել հաշվետվություններ և իրականացնել շահերի պաշտպանությանն ուղղված այնպիսի քայլեր, որոնք անհրաժեշտ են վեր հանված փաստերի հրապարակման համար: Այն դեպքում, երբ մշտադիտարկումն անցկացվում է առանց նման հաջորդական միջոցառումների, կա վտանգ, որ այն կարող է օրինականացնել քրեական արդարադատության արատավոր գործընթացները:

Գործնականում դատավարությունների մշտադիտարկման ծրագրերի մեծամասնության ուշադրությունը սովորաբար կենտրոնացած է քրեական արդարադատության համակարգերի վրա: Այսպես, ԵԱՀԿ փորձի համատեքստում *դատավարությունների հատուկ մշտադիտարկում* տերմինը հիմնականում վերաբերում է այն նախագծերին, որոնք անմիջական արձագանք են քրեական դատավարությունների պատճառ դարձած որոշակի իրադարձությունների և նախատեսվում են հատուկ դրանց դիտարկման համար: Այդպիսի իրադարձություններ կարող են լինել հետընտրական բռնությունները, քաղաքական անկայունությունը կամ ակտիվ իրավապաշտպանների դատական հետապնդումները: Նման դատավարություններին դիտորդների ներկայությունը կարող է հատկապես կարևոր լինել որպես վստահության ամրապնդման միջոց՝ ԵԱՀԿ-ի՝ դատավարությունների

Ի դեպ, դատավարությունների հատուկ մշտադիտարկման ծրագիրը մեկնարկել է ԺՅՄԻԳ-ը՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ, 2008 թվականի մարտի 1-2-ին Երևանում ոստիկանության և ցուցարարների միջև բռնությամբ ուղեկցվող բախումների հետքերով: Դիտարկումներն (2008 թ. ապրիլի 15-ից մինչև 2009 թ. հուլիսի 31-ը) անցկացվել են հարուցված քրեական գործերով: Մշտադիտարկման արդյունքում պատրաստված զեկույցը հիմք է ծառայել գործող օրենսդրությունը միջազգային փորձաքննության ենթարկելու և նոր քրեական դատավարության օրենսգիրքը մշակելու համար:

<sup>41</sup> ԵԱՀԿ Մարդկային չափման խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթ, 1990 թ.:

Իտարբերություննախորդի՝ դատավարությունների թեմատիկ մշտադիտարկում տերմինը վերաբերում է այն նախագծերին, որոնք կենտրոնանում են որոշակի տեսակի դատական գործերի, դատավարության փուլի կամ առանձին թեմայի վրա: Նման ծրագրերը ստեղծվում են ռազմական հանցագործությունների, կազմակերպված հանցավորության, խոցելի խմբերի շահերը շոշափող գործընթացներին կամ նոր օրենսդրության կիրառմանը հետևելու համար:<sup>42</sup>

## Մշտադիտարկման առարկան

Ժողովրդավարությունն ամրապնդելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը ձգտում է անընդհատ բարելավել մարդու իրավունքների շրջանակը: Այս գործընթացի էական նախապայմաններից է իրավական դաշտը, այն, թե ինչպես են իրականացվում անհատական իրավունքների պաշտպանությունը և մարդու իրավունքների ու ազատությունների չափանիշների կատարելագործումը: Այնուամենայնիվ, դատական համակարգը, համարվելով ամենաարդյունավետ գործիքներից մեկը, մնում է թույլ, անարդյունավետ և կոռուպցիայի հակված, հանցագործությունները հաճախ անպատիժ են մնում: Դա պայմանավորված է նրանով, որ այն անկախ չէ և չի արձագանքում ժողովրդավարական վերափոխման և օրենքի գերակայության պահանջներին, հետևաբար փոփոխությունները բավականին դանդաղ և դժվար են կատարվում: Ցանկացած արտակարգ դրություն (օրինակ՝ Հայաստանում հաստատված Էր՝ պայմանավորված ԶՈՎԻԴ-19-ի արագ տարածմամբ և 2020 թ.-ի թուրք-ադրբեջանական միացյալ ուժերի կողմից սանձազերծված պատերազմով) իրավիճակն Էլ ավելի է բարդացնում: Չգործող ռեժիմը և հին կարծրատիպերը պետք է փոխվեն կրթված և ուժեղ դատական դիտորդների նոր սերնդի իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման ճանապարհով, որոնք ապագայում կդառնան ակտիվ բարեփոխիչներ՝ նպաստելով իրապես արդար և անկախ դատական իշխանության կայացմանը:

Մշտադիտարկումը միտված է խթանելու տեղեկատվական հասանելիության և դատական համակարգի թափանցիկության շարունակական զարգացումը Հայաստանում: Այդ նպատակով մշակվեց մշտադիտարկման գործնական մեխանիզմ՝ որպես օգտակար, հարմարվող և կիրառելի գործիք՝ տեղեկատվության և հետադարձ կապի միջոցով դատական համակարգի թերություններն ու բացերը վեր հանելու համար: Մշտադիտարկմամբ արձանագրված մարտահրավերների հաղթահարումը մշտադիտարկման արդյունավետության և տեսանելիության մյուս երաշխիքային գործընթացն է. դրան են ուղղված սույն զեկույցով առաջարկվող համապատասխան իրավական լուծումները:

Մշտադիտարկման սույն ծրագիրը համակարգային է, քանի որ ենթադրում է արդարադատության համակարգի նկատմամբ խորքային և ճյուղային ազդեցության կիրառում: Ծրագրի հիմնական խնդիրը արդարադատության համակարգի ավելի ընդգրկուն բարեփոխումների խթանումն է, իսկ վերջնական նպատակն է աջակցել անկախ, արդյունավետ, մարդու իրավունքների նորմերը հարգող դատական համակարգի ձևավորմանը:

<sup>42</sup>ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի 2012 թ.-ի «Դատավարությունների մշտադիտարկում» ուղեցույցում «ռազմական հանցագործություններ» տերմինը օգտագործվում է որպես ընդհանրացում և կիրառվում է ժնկյան կոնվենցիաներով նախատեսված կոպիտ խախտումների և զինված հակամարտությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև ցեղասպանության ժամանակ այլ իրավունքների խախտումների առնչությամբ:

## Մշտադիտարկման մեխանիզմը և դրա արդյունավետությունը

2021 թվականի հուլիսի 15-ին Կազմակերպությունը մեկնարկեց Նոր փորձնական ծրագիր, որի հիմնական նպատակն է բարձրացնել Հայաստանի քրեական արդարադատության համակարգի թափանցիկությունը՝ խրախուսելով երիտասարդների մասնակցությունը: «*Իրավական ոլորտում վերապատրաստված երիտասարդ քաղաքացիները՝ որպես անկախ և թափանցիկ դատական համակարգի երաշխավորներ*» ծրագիրն իրականացվում է Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Լեհաստանի զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ և Լեհաստանի համերաշխության հիմնադրամի համագործակցությամբ:

Ծրագիրն ավարտվում է 2021 թվականի դեկտեմբերի 1-ին: Ծրագրային միջոցառումներն անցկացվել են Հայաստանի Հանրապետության երեք խոշորագույն քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում, որտեղ դատական դիտորդների չորս խումբ (դրանցում այժմ ներգրավված են ավելի քան 120 երիտասարդներ՝ իրավապաշտպաններ, ուսանողներ և ավագ դպրոցի աշակերտներ, ակտիվորեն մասնակցել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի թվով վեց դատարանների քրեական գործերի դատավարությունների ավելի քան 700 նիստերի դիտարկմանը):

Ծրագրի շրջանակներում մասնակիցները ձեռք են բերել մշտադիտարկման փորձառություն՝ պարբերաբար այցելելով դատարաններ և դիտարկելով քրեական գործերով նիստերը տարածքային փորձագետ-դիտորդների աջակցությամբ և անմիջական հսկողությամբ:

Մարզային դիտորդ-համակարգողը և փորձագետը երիտասարդ դիտորդներին առաջարկել են օգտակար քայլեր՝ մշտադիտարկման գործընթացի համապատասխան փոփոխության և արդյունավետության բարձրացման համար: Չեկուցվել են այն բացթողումներն ու թերությունները, որոնք ի հայտ են եկել դիտարկված գործով դատավարության ընթացքում: Փորձագետը հանդիպել է խմբի անդամների և մարզային համակարգողների հետ՝ լսելու նրանց պատմությունները, արձագանքները, օգտակար առաջարկություններ ու խորհուրդներ տալու: Նա նաև մշտական կապի մեջ է եղել մարզային համակարգողների հետ՝ աշխատանքների ընթացքը և առկա թերությունները առանձին-առանձին քննարկելու, ինչպես նաև Էական և դրական փոփոխություններին ուղղված լուծումներ առաջարկելու նպատակով:

Վերջին ամսվա ընթացքում ծրագրի թիմը հրավիրել է եզրափակիչ քննարկումներ յուրաքանչյուր խմբի հետ, որին մասնակցել են խմբերի ակտիվ անդամները և մարզային համակարգողները՝ զեկույցի նախագիծը վերանայելու, դրա բարեփոխմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու և վերջնական տեսք հաղորդելու համար:

Չեկույցի առանցքային մասն են դատական համակարգի բարեփոխումների վերաբերյալ մշակված առաջարկները:

# Դիտորդական խումբը

## Դիտորդական խմբի կազմավորում և վարքագծի կանոններ

«Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում մշակված «Դատական մշտադիտարկում և լուսաբանում: Արդար դատաքննության արտաքին երաշխիքներ» ուղեցույցում արդեն իսկ անդրադարձ կատարվել է դատական մշտադիտարկման պարբերաշրջանի գաղափարին և բաղկացուցիչ փուլերին:

Ընդհանուր առմամբ խմբերի հետ նախապատրաստական աշխատանքները ուղղված են եղել նրան, որ տեղեկատվությունը ներկայացվի ոչ թե ինքնաբերաբար, այլ ծրագրի ռազմավարությանը համապատասխան, ինչը ծրագրի ղեկավարներին հնարավորություն է տալիս ձևավորելու համապատասխան փորձով ու գիտելիքներով դիտորդների թիմեր և սահմանելու անձնակազմի քանակը՝ անհրաժեշտ պարբերաշրջանի յուրաքանչյուր փուլի համար: Այն նաև թույլ է տալիս դիտորդների թիմին արդյունավետորեն բաշխել ծանրաբեռնվածությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնակցի հմտությունների և իրավասության մակարդակի, ինչպես նաև հաշվի առնել այն ժամանակը, որն օբյեկտիվորեն պահանջվում է յուրաքանչյուր առաջադրանք կատարելու համար:<sup>43</sup>

Մշտադիտարկման այս ծրագրի կատարողականության հարցում անհերքելի է վերոհիշյալ բանաձևի արդարացի ընտրության հանգամանքը, ինչը և հնարավորություն է ընձեռնել դիտորդներին մշտադիտարկման ողջ ընթացքում ոչ միայն զարգացնելու գիտելիքներն ու հմտությունները, այլև համապատասխան մեթոդների համապարփակ կիրառմամբ բարձրացնելու տոկոսության աստիճանը, կառավարելու/տնօրինելու ժամանակը, ճանաչելու սեփական ռեսուրսները և իրականացնելու թիմային աշխատանք:

Դիտորդական խումբը հիմնականում բաղկացած է եղել բարձր դասարանցիներից, ուսանողներից և ոչ իրավաբաններից: Արձանագրված խնդիրներն այնքան ակնհայտ և կոպիտ են եղել, որ տեսանելի են եղել նույնիսկ ոչ իրավաբանների համար: Հարկ է նշել, որ, ծրագրի փորձնական բնույթով պայմանավորված, զեկույցում տեղ են գտել կարճ ժամանակում և ոչ մասնագետների կողմից արձանագրված փոքրաթիվ և ակնառու խախտումները, և բազմաթիվ խորքային խնդիրներ դուրս են մնացել այս տեքստից:

Սույն բաժնում հիշատակված ուղեցույցում Կազմակերպությունը նաև անդրադարձել է դիտորդների վարքագծի կանոններին, ինչի համար հիմք են ծառայել ԵԱՀԿ-ի կողմից սահմանված վարքագծի օրինակելի կանոնները:<sup>44</sup>

<sup>43</sup> «Դատավարությունների մշտադիտարկում», ուղեցույց, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 2012 թ., <https://www.osce.org/files/f/documents/4/0/102519.pdf>:

<sup>44</sup> «Դատավարությունների մշտադիտարկում», ուղեցույց, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 2012 թ., <https://www.osce.org/files/f/documents/4/0/102519.pdf>:



## Տվյալների հավաքման մեխանիզմներ

Հայաստանի Հանրապետությունում դատական գործերի վերաբերյալ տեղեկատվության հասանելի միակ տարբերակը **DataLex** դատական տեղեկատվական համակարգն է: <sup>45</sup> Դիտորդական խմբերը, որպես տվյալների ձեռքբերման առանցքային և հիմնական միջոց, օգտվել են այս գործիքից: Բացի սրանից՝ դիտորդներին հաջողվել է դատական նիստերի ավարտին հարցազրույց վերցնել դատավարության մասնակիցներից, մասնավորապես պաշտպաններից, տուժողների ներկայացուցիչներից, իրավահաջորդներից և օրինական ներկայացուցիչներից: Դատախազների հետ հարցազրույցն անհնար է եղել դատախազական համակարգի՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցելուց խուսանավելու պատճառով:

## Հաշվետվողականություն. միջանկյալ և ամփոփիչ հաշվետվություններ

Ծրագրային գործունեությունն իրականացվել է դատական մշտադիտարկման գործնական մեխանիզմի համաձայն, որը ներկայացնում է մշտադիտարկման հաճախականությունն ու ձևը, ինչպես նաև հետադարձ կապն ու հաշվետվողականությունը:

Ներքին հաշվետվողականությունը դիտորդների համար դատական գործերի վերաբերյալ տեղեկությունները և վերլուծության արդյունքները հաշվետվությունների տեսքով համակարգողներին ներկայացնելու միջոց է: Դատական գործընթացների հաշվետվողականության արդյունավետ համակարգը պետք է կարգավորի դրանց վերաբերյալ հաշվետվությունների բովանդակությունն ու կառուցվածքը:

Երիտասարդ մշտադիտարկողների տեղական խմբերը մարզային համակարգողների ղեկավարությամբ ամսվա ընթացքում 3-ից մինչև 20 անգամ այցելել են դատարաններ, հետևել քրեական գործի դատաքննությանը և համապատասխան արձանագրություններ կազմել դատաքննության ընթացքի և գործի մշտադիտարկման ընթացքում հայտնաբերված անկատարության ու թերությունների մասին՝ լրացնելով դատարանի մշտադիտարկման հաշվետվության նմուշային թերթիկը:<sup>46</sup>

Տեղական խմբի անդամները մարզային համակարգողի և փորձագետի ղեկավարությամբ հավաքվել են ամիսը երեք անգամ՝ քննարկելու կատարված աշխատանքը, ինչպես նաև իրենց հաշվետվությունների հիման վրա ներկայացրել են ընթացիկ մարտահրավերներն ու խնդիրները: Չեկուցվել են այն բացթողումներն ու թերությունները, որոնք դիտարկված գործով ի հայտ են եկել դատավարության ընթացքում:

Ծրագրի վերջին ամսում դիտորդների խմբերը ծրագրի ղեկավար թիմի կողմից անցկացված քննարկմանը մասնակցել են առանձին-առանձին՝ արդյունքներն ամփոփելու, ինչպես նաև իրենց կողմից բացահայտված թերությունները վերլուծելու, ձևակերպելու և բարեփոխումների վերաբերյալ առաջարկներ մշակելու համար:

---

<sup>45</sup> <http://datalex.am/?app=AppCaseSearch>

<sup>46</sup> Մշտադիտարկման հաշվետվության նմուշային թերթիկի օրինակը ներառված է «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպության՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացված «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում մշակված «Դատական մշտադիտարկում և լուսաբանում: Արդար դատաքննության արտաքին երաշխիքներ» ուղեցույցում՝ հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3lWs88f>

## Յետևություններ և առաջարկներ

Ծրագրի նպատակի՝ դատական համակարգի բարելավմանը միտված արդյունավետ միջոց են համակարգում առկա բացերի և թերությունների վերահանումը, ինչպես նաև անհրաժեշտ վերանայումներին ուղղված առաջարկությունների մշակումը և ներկայացումը պատկան մարմիններին: Այս նպատակն իր ողջ խորքով տեսանելի է ծրագրի առանցքային գործիքի՝ դատական մշտադիտարկման կիրառմամբ: Դրա թափանցիկության և արժանահավատության ապահովման նպատակով էլ կազմվել է մշտադիտարկման քարտեզը, ձևավորվել են դիտորդական խմբերը:

Արդյունքները հերթական անգամ վկայում են այն մասին, որ դատական համակարգի ապաքինման կամ առնվազն առաջնային սովորության մակարդակում ընթացակարգային վերանայումների համար հուսալի երաշխավոր կարող են լինել դատական մշտադիտարկողները, որոնց կատարած դիտարկումների հիման վրա էլ կազմվել է սույն զեկույցը:

### Օրենսդրական բացեր և անհրաժեշտ վերանայումներ

Չնայած այն հանգամանքին, որ դատական նիստերին մշտադիտարկողների ներկայությունն ապացուցել է իր նշանակալիությունը, և սույն ծրագրի շրջանակներում դիտորդական խմբերի՝ դատական նիստերին ներկա գտնվելը հիմնականում չի խոչընդոտվել դատարանների կողմից, այնուամենայնիվ, առկա է խնդիր սովորության վարքագծի տեսանկյունից:

### Արդարադատությանը հակազդող դատավարական սովորույթներ և դրանց հաղթահարմանն ուղղված շոշափելի լուծումներ

Ծրագրի ընթացքում իրականացված մշտադիտարկումների արդյունքում բացահայտվել են ոչ միայն օրենսդրական, այլև համակարգային և սովորության բնույթ ունեցող մի շարք խնդիրներ, որոնք ներկայացվում են ստորև՝ ըստ մշտադիտարկման քարտեզի:

Մշտադիտարկում անցկացրած դիտորդական չորս խմբերի կողմից էլ արձանագրվել են նույնաբովանդակ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են *բավականին ուշացումով դատական նիստերը բացելը* (ինչը խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 317-րդ հոդվածի պահանջը) կամ, *առանց բացելու, դատական նիստերը հետաձգելը* (հակասում է Օրենսգրքի բազմաթիվ հոդվածների հավաքական տրամաբանությանը) կամ դատական նիստերը հետաձգելը՝ առանց պատճառների հստակեցման (Օրենսգրքի իմաստով՝ սա անկատար է դարձնում ողջամիտ ժամկետում գործի քննությունը, որն արդարադատության անհրաժեշտ բաղադրիչ է):

**Վերոնշյալ խախտումներից զատ՝ դիտորդական խմբերն արձանագրել են այլ խնդիրներ ևս, որոնց անդրադառնում ենք ստորև՝ ըստ քարտեզի:**  
**Երևանի դիտորդական խմբի արձանագրած խախտումները**

- Բազմաթիվ գործեր քննվել են դռնբաց դատական նիստում, սակայն դատական նիստերին ներկա անձանց համար ապակեպատ դահլիճներից բացարձակապես ոչ մի բան լսելի չի եղել, ինչը կասկած է հարուցում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված՝ դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի ապահովման առնչությամբ, ինչպես նաև չի արտացոլում Դատական դեպարտամենտի՝ դատարանների կյուրատեխնիկական ապահովվածության իրականացման պարտավորության մասին պահանջները՝ սահմանված «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենքով և, օրենսդրական ենթակայության հիմքով, նաև ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ ԲԴԽ) 2018 թվականի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշմամբ:
- Դատավորը դռնբաց դատական նիստում քննվող գործով անցնող ամբաստանյալից փորձել է ճշտել վերջինիս՝ մտավոր խնդիր ունենալու հանգամանքը այն բանից հետո, երբ ամբաստանյալը դատավորին խնդրել է բացատրել իր իրավունքներն ու պարտականությունները: Դատավորը նման վարքագծով ակնհայտորեն ոտնահարել է ամբաստանյալի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքը՝ այդ կերպ անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի քննության առթիվ ամբաստանյալի համար լուրջ երկմտանքի պատճառ ստեղծելով: Դատավորի նմանօրինակ վարքագիծը հիմք է նրա նկատմամբ առնվազն կարգապահական վարույթ հարուցելու համար:
- Մինչ դատական նիստը սկսվելը ամբաստանյալը թուղթ է փոխանցել իր կնոջը, որից հետո կինը դատարանում ցուցմունք է տվել: Այդ ամենը տեսնելով հանդերձ՝ դատական կարգադրիչները և ուղեկցող ոստիկանները որևէ կերպ չեն միջամտել:
- Չհարցաքննված վկային թույլատրվել է գտնվել դատական նիստերի դահլիճում և լսել հարցաքննվող վկայի ցուցմունքը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 340-րդ հոդվածի իմաստով, ոտնահարում է արդար դատաքննության իրավունքը:
- Երբ ամբաստանյալը չի լսել վկայի ցուցմունքը և խնդրել է նրան բարձր խոսել, դատավորն ամբաստանյալին խորհուրդ է տվել լսողական սարք կրել՝ այդ կերպ չկատարելով անձի արժանապատվությունը հարգելու քրեադատավարական պարտավորությունը:
- Դատավորը և դատավարության մասնակիցները, խախտելով Քովիդ-19 համավարակի կանխարգելման վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված կանոնները, հիմնականում չեն դրել պաշտպանիչ դիմակ:
- Բազմիցս նկատելի են եղել դատական կարգադրիչների՝ համազգեստի ոչ պատշաճ կամ մասնակի/ոչ ամբողջական կրման դեպքեր:
- Ուշացումներից զատ՝ արձանագրվել են նաև նշանակված ժամից շուտ դատական նիստ սկսելու դեպքեր:
- Շատ դեպքերում դատավորները և, նրանց թողտվությամբ, դատախազները հեզանքով են դիմել ամբաստանյալներին և նրանց պաշտպաններին:

- Դատարանի միջանցքում դրված են եղել քրեական գործի կամ գործերի նյութեր:
- Դատական նիստի ընթացքում, երբ ներկայացվել է ամբաստանյալի խափանման միջոցը՝ կալանքը փոխելու միջնորդությունը, դատավորը լսել է բոլորին՝ բացի ամբաստանյալից:

### **Գյուլմրու դիտորդական խմբի արձանագրած խախտումները**

- Դատական նիստը 3 տարի շարունակ հետաձգվել է, ինչը հակասում է գործի արդարացի քննության սկզբունքի առարկայացմանը:
- Ամբաստանյալի հարցաքննությունը կատարվել է տեսակապի միջոցով, այսինչ ԶԶ քրեական դատավարության օրենսգիրքը նման ընթացակարգ չի նախատեսում:
- Դատավորի՝ մեկ այլ դատավորով փոխարինվելուց հետո գործը ոչ թե վերսկսվել է, այլ շարունակվել է ընդհատված փուլից: Փոխարինած դատավորը չի իմացել, թե քրեական գործում ինչ ապացույցներ են հետազոտվել. օրինականության սկզբունքի համատեքստում սա միանշանակ հակասում է քրեադատավարական վերաբերելի նորմերի պահանջներին:
- Կողմերը պատշաճ չեն ծանուցվել դատական նիստի ժամանակի մասին, այսինքն՝ ոտնահարվել է դատավարության մասնակիցների պատշաճ ծանուցված լինելու իրավունքը:
- Նույն դատական կազմով վարվող դատական նիստերը նշանակվել են նույն ժամին: Նման իրավիճակը հստակ կերպով բացառվում է ԶԶ քրեական դատավարության օրենսգրքով:
- Դատավորը չի արձագանքել նաև վկաների իրավունքները պաշտպանելու մասին դատախազի հայտարարությանը, այսինքն՝ դատախազի անաչառության և անկողմնակալության վերաբերյալ առաջացած ողջամիտ կասկածները դատավորի համար դատախազի նկատմամբ սանկցիա կիրառելու հիմք չեն ծառայել:
- Դատավորը դատական նիստերի դահլիճից հեռանալու պահանջ է ներկայացրել դատական նիստին ներկա մի խումբ անչափահասների, որոնք դատական նիստի ընթացքում վերադարձել են նիստերի դահլիճ: Դատավորը չի արձագանքել այս հանգամանքին՝ այդպիսով բացասաբար ազդելով դատարանի նկատմամբ հարգանքի ձևավորման վրա:
- Կարգադրիչները դիտորդներին ուղղել են հարցեր, որոնք ընդհանրապես չեն բխում «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ԶԶ օրենքի և ԲԴԽ-25-Ո-58 որոշման պահանջներից:
- Դատական նիստին պաշտպանի՝ միջնորդություն ներկայացնելու ընթացքում դատավորը զբաղված է եղել հեռախոսով և անտարբերություն է դրսևորել դատավարության տվյալ փուլում՝ այդ կերպ, «ԶԶ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի իմաստով, ոչ հարգալից և ոչ բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերելով դատավարության մասնակցի նկատմամբ:
- Դատավորը, առանց ԶԶ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված հիմքերի, թույլատրել է դատական նիստից բացակայող վկայի՝ հետաքննության և նախաքննության ընթացքում տված ցուցմունքների հրապարակումը:
- Դատարանում գտնվող դիտորդները չեն կարողացել դատական նիստերի վերաբերյալ տեղեկություն ստանալ դատարանի աշխատակազմից:

## **Վանաձորի դիտորդական խմբի արձանագրած խախտումներ**

- Համաձայնեցված վարույթով գործի քննության ժամանակ հայերենի բավարար իմացություն չունեցող ամբաստանյալի համար չի ապահովվել թարգմանչի ծառայություն, ինչով և փաստվում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձի կողմից օրենքով երաշխավորված իր իրավունքներն իրականացնելու հնարավորության օգտագործման իմպերատիվ պահանջը:
- Նիստի ընթացքում դատախազի կողմից վկաների, նաև ամբաստանյալների նկատմամբ հոգեբանական ճնշում է գործադրվել, ինչին դատավորները չեն արձագանքել, այնինչ *դատական նիստը նախագահել* եզրույթը բովանդակում է նաև այնպիսի պարզ գործառույթ, ինչպիսին է դատախազի վարքագծի զսպումը՝ հանուն արդարադատության շահի:
- Առողիտ և վիդեո ձայնագրություններն ուսումնասիրելու համար տուժողի իրավահաջորդն է դատական նիստերի դահլիճը հագեցրել նյութատեխնիկական միջոցով, ինչը բացառապես Դատական դեպարտամենտի պարտականությունների շրջանակում է՝ սույն բաժնում մատնանշված հիմքով:
- Դիտորդներին դուրս են հանել դատական նիստերի դահլիճից:
- Դատական նիստերի ընթացքում դատավորների և դատախազների միջև արձանագրվել են ջերմ զրույցներ:
- Դատական նիստի ժամանակ պաշտպանի կողմից դատարանի հասցեին հնչեցվել են վիրավորական արտահայտություններ, որոնք անհետևանք են մնացել:
- Չհարցաքննված վկային թույլատրվել է գտնվել դատական նիստերի դահլիճում և լսել հարցաքննվող վկայի ցուցմունքը:
- Դատական նիստի արձանագրության ձայնագրությունը հնարավոր չի եղել վերարտադրել. խնդրի մասին որևէ հիմնավորում չի ներկայացվել:
- Դատական նիստի ժամանակ դատախազը չի ներկայացել դատարան, նիստերի քարտուղարը զանգահարել է նրան՝ տեղեկանալու չգնալու պատճառի մասին, ինչին ի պատասխան դատախազը նշել է, որ անձրև է, և չի կարող գալ դատարան:

## **Առաջարկներ**

- Դատավորների վերապատրաստումները թեև չեն կարող ամբողջ ծավալով չեզոքացնել արդարադատությանը հակազդող սովորութային խախտումները, սակայն անհրաժեշտ են և պահանջում են ավելի խորքային մոտեցումներ, որոնք կներառեն դատավորների մեջ մեծամասամբ արմատավորված անհարգալից վարքագծի վրա:
- Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացը ևս ի վիճակի չէ բացարձակ արդյունք ապահովելու, սակայն անհրաժեշտ է դատավորների վարքագծի զսպման տեսանկյունից: Մյուս կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ վարույթներում պետք է ներգրավված լինեն նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդություն ներկայացրած անձինք, որոնց մասնակցությունը ԲԴԽ նիստերին և լսված լինելը չափազանց կարևոր են՝ թափանցիկ արդարադատության ապահովման նկատառումներից ելնելով:
- Պետք է ձևավորել համագործակցության մեծ ցանց, որը համապատասխան օրենսդրական կարգավորման պարագայում ենթադրելու է դատական մշտադիտարկման ձևավորված ինստիտուտ:

- Դատական մշտադիտարկումներն անհրաժեշտ են ոչ միայն դատական նիստերի, այլև դատական կարգադրիչների աշխատանքի դիտարկման համար՝ հաշվի առնելով հատկապես Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ծառայություն իրականացնող կարգադրիչների վարքագիծը:
- Անհրաժեշտ են դատական կարգադրիչների պարբերական վերապատրաստումներ, որոնց կենտրոնում լինելու է կարգադրիչների վարքագծի խորքային փոփոխության հարցը:
- Դատական մշտադիտարկման արդյունավետության համար որոշիչ կարող է լինել նաև DataLex դատական տեղեկատվական համակարգում գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բողոքների քննության մասին տեղեկության ինչպես հասանելիությունը, այնպես էլ թարմացումը :
- Դատական նիստերի վերաբերյալ տեղեկության հասանելիությունը դժվարանում է նաև դատարաններում տեղադրված DataLex դատական տեղեկատվական կրպակները չգործարկելու պատճառով. սա նույնպես պահանջում է շուտափույթ լուծում:
- ԲԴԽ-ի՝ դատական նիստերի լուսաբանման /լրագրողների անխոչընդոտ աշխատանքի վերաբերյալ/մասին որոշումը դատավորների կամայական որոշման հետևանքով շատ դեպքերում չի գործում: Որոշ դատավորներ թույլատրում են լուսաբանել նիստը 5-10 րոպե տևողությամբ, ինչն ակնհայտորեն խոչընդոտ է ստեղծում լրագրողի համար: Այս առումով անհրաժեշտ է, որ ԲԴԽ-ն առանձին հանձնարարական ուղարկի դատավորներին: Նաև, որպես հանձնարարականի կատարման վերահսկողություն, կարելի է համագործակցություն ձևավորել դատական նիստերը լուսաբանող լրատվամիջոցների հետ, որոնցից հնարավոր կլինի պարբերաբար տեղեկություններ ստանալ դատավորների՝ լրագրողների աշխատանքի երաշխավորման վերաբերյալ՝ ըստ նշված հանձնարարականի:
- Բազմիցս արձանագրվել են դատական նիստերի հետաձգման դեպքեր դատական ծանուցագրերի՝ ժամանակին չուղարկվելու պատճառով: Անհրաժեշտ է օգտվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թույլատրվող՝ էլեկտրոնային փոստով ծանուցումներ ուղարկելու հնարավորությունից՝ բացառելով դատական նիստերի անհարկի ձգձգումները:
- Դատարանները կարիք ունեն տեխնիկական վերազինման, այդ թվում՝ տեսաձայնային նյութերի՝ ապացույցների հետազոտման համար անհրաժեշտ տեխնիկայի:
- Անհրաժեշտ է դատական նիստերի դահլիճներում դատավորներին տրամադրել համակարգիչներ, որպեսզի վերջիններս հեռախոսից չօգտվեն և տպավորություն չստեղծվի, թե վերջիններս զբաղված են դատական նիստի հետ կապ չունեցող գործողություններով:
- Անհրաժեշտ է կամ ապամոնտաժել դատական նիստերի ապակեպատ դահլիճների ապակյա պատերը, կամ դահլիճները վերազինել անհրաժեշտ տեխնիկայով, որպեսզի դատավարությունը լսելի լինի ներկաների համար:
- Պետք է բացառել դատական նիստերն անհարկի և ոչ պատշաճ ընթացակարգով հետաձգելու արատավոր պրակտիկան:
- Պետք է բացառել չհարցաքննված վկաների ներկայությունը դատական նիստերի դահլիճում:
- Պետք է արմատախիլ անել ամբաստանյալներին տեսակապի միջոցով հարցաքննելու արատավոր պրակտիկան:
- Անհրաժեշտ է խստիվ պահպանել Զովիդ-19 համավարակի կանխարգելման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կանոնները:
- Անհրաժեշտ է բացառել նաև դատական նիստերի ընթացքում դատավորների և դատախազների կասկածելի ջերմ փոխհարաբերությունները, ինչպես նաև նրանց հեղևական վերաբերմունքը ամբաստանյալների և նրանց պաշտպանների նկատմամբ:

- Դատարանում մուտք արված, նույնիսկ արխիվացման ենթակա ցանկացած փաստաթուղթ ենթակա է ապահով և պատշաճ պահպանման, ուստի պետք է զերծ մնալ դատական գործերի նյութերը դատարանների միջանցքներում թողնելուց:

Բարձրացված խնդիրները թեև չեն կարող լիովին ամփոփել արդարադատությանը վնաս հասցնող երևույթների շրջանակը, այնուամենայնիվ, ընդհանրական և տեսանելի պատկեր են ստեղծում Ծրագրի նպատակի մասին և առարկայացնում խնդիրների հաղթահարման մարտահրավերները:

